ԹԱՆԵՐ ԱՔՉԱՄ. ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՋՐԲԱԺԱՆՈՒՄ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՐՁ

Կազմեց՝ ԱՆՆԱ ԱՂԱԽԱՆՅԱՆԸ

«Եկխոսություններ միջազգային ջրբաժանում. թուրք-հայկական երկխոսությունների փորձ» աշխատությունում Թաներ Աքչամը քննության է առել այն խոչընդոտները, խնդիրները, դժվարությունները, որոնք առկա են թուրք-հայկական հարաբերություններում, փորձ է արել գտնել դրանց հաղթահարման հնարավորությունները: Որպես այդպիսին՝ հեղինակն առաջարկում է երկխոսությունների ուղին և դրանց կազմակերպման համար ներկայացնում է իր մշակած նախագիծը:

Հայ-թուրքական թշնամանքը գալիս է պատմական անցյալից: Այսօր այս հակասությունների ոլորտում ընդգրկված են թուրքական և հայկական պետությունները, նրանց սփյուռքը: Կողմերից յուրաքանչյուրն ունի հայկական ողբերգության իր մեկնաբանությունները: Հարցի կապակցությամբ թուրքական տեսակետն ավանդական է և ոչ անհայտ: Եվ սակայն Աքչամն այն եզակի թուրք պատմաբաններից է, որ փորձ է անում պատմությունն ուսումնասիրել ի հնարավորինս անաչառ: Լինելով քաղաքական ամսագրի գլխավոր խմբագիր և պայքարելով Թուրքիայում հասարակական արդարության ու ժողովրդավարության համար՝ նա 1976թ. ձերբակալվել է, սակայն մեկ տարի անց կարողացել է փախչել Գերմանիա: Աշխատելով Համբուրգի ինստիտուտի սոցիալական ուսումնասիրությունների բաժնում՝ նա իր ուսումնասիրությունների թեման է ընտրել գլխավորապես Թուրքիայում դարասկզբին տեղի ունեցած ողբերգությունը, ուշադրությունը սևեռելով էթնիկ փոքրամասնությունների՝ հույների, ասորիների, սերբերի, հրեաների և հատկապես՝ հայերի պատմության վրա: Այս աշխատության հրատարակման համար Թ. Աքչամին մեծ օգնություն է ցույն տվել Զորյան ինստիտուտը:

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ, ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ, ՈԵՖԵՐԱՏԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Գրքի առաջին գլխում («*Կա՞ ուրիշ լուծում երկխոսությունից զատ*») հեղինակը նախ՝ խոսում է այն մի քանի ձեռնարկումների մասին, երբ փորձ է արվել անդրադառնալ «հայկական տաբուին»: Մասնավորապես, նշվում են թուրք և հայ գիտնականների միացյալ սիմպոզիումը Չիկագոյում (մարտի 17-19, 2000), Հայկական սփյուռքի գիտական ուսումնասիրության կենտրոնի կազմակերպած՝ «Հայ-թուրքական երկխոսությունը Հայկական հարցի մասին» միջազգային գիտաժողովը՝ Փարիզում, որին մասնակցում էին նաև

թուրքական դեսպանության անդամները (հունիսի 17, 2000), Անկարայի և Երևանի համալսարանների քայլերը՝ միացյալ նախագիծ կազմելու ուղղությամբ, «Հայոց ցեղասպանությունից փրկված մարդկանց վերքերը» վերնագրով Ստամբուլի Բոսֆորուսի համալսարանում տեղի ունեցած կոնֆերանսը (հունիսի 15-19, 2000): Սրանցում, հակառակ Հայկական հարցի վերաբերյալ ավանդական մոտեցումներին, փորձ է արվել նոր մոտեցումներ ցուցաբերել: Սակայն ուժերը, որ փորձում են Թուրքիայի հանրապետությունը վերածել «միատարր ազգային պետության», գիտակցում են, որ հասարակության բազմակարծիք համակարգը լուրջ արգելք է ներկայացնում: Այդ պայմաններում նրանք նախընտրում են ավելի հեշտ ուղի՝ սքողել սոցիալական տարաձայնությունները, որոնք «միազգայնության» չափանիշներով հայտարարվում են «արգելված թեմա»: Արդյունքում՝ այդ «արգելված թեմաները» քրեական օրենսգրքի նոր ընդունված հոդվածներով հայտարարվում են պատժելի:

Կարելի է փաստել, որ թուրքական հանրապետությունը, ըստ Աքչամի, հիմնվել է հինգ տաբուների վրա.

1. Թուրքիայում չկան սոցիալական դասեր. բոլորը մի ազգի մասն են հանդիսանում: (Քրեական օրենսգրքի 141, 142 հոդվածներն արգելում են քննարկել դասային տարբերությունները):

2. Թուրքիայում չկան քրդեր. դրանք լեռնային շրջանների թուրքերն են: (Քրեական օրենսգրքի 125 և այլ հոդվածներ պատիժներ են նախատեսում այն անձանց համար, ովքեր պնդեն հակառակը):

3. Թուրքական հասարակությունը աշխարհիկ և արևմտյան տիպի է: (163-րդ հոդվածով չի թույլատրվում իսլամական արժեքների և իսլամական մշակույթի մասին քննարկումները):

4. Գոյություն չի ունեցել Հայոց ցեղասպանությունը: (Քանի որ ոչ ոք չի փորձել հակադրվել դրան, կարիք չի զգացվել քրեական օրենսգրքում այդ մասին հատուկ հոդված մտցնել):

5. Այս տաբուների երաշխիքը թուրքերի զինված ուժերն են, որոնք պետք է հետևեն դրանց պահպանմանը, քանզի դրանց վրա է խարսխվում հանրապետությունը:

Թուրք-հայկական սկզբունքային հակասություններն ունեն պատմական արմատներ: Խոսքը 1915թ. Իթթիհատ վե Թերաքքիի Օսմանյան աղմինիստրացիայի կողմից հայերի ոչնչացման պլանի մասին է: Սակայն թուրքական կառավարությունները շարունակաբար և համառորեն ժխտել են այդ իրողությունը՝ պնդելով, թե հայերը պատերազմի ընթացքում համագործակցել են ռուսների հետ և սպանել բազմաթիվ մուսուլմաններ: Թուրքական ավանդական դիրքորոշումը ներկայացնում են համալսարանները, կիսապաշտոնական ինստիտուտները, որոնց խնդիրն է «շրջանառության մեջ դնել ցեղասպանության սուտը»: Դրա համար գործի են դրվում հրատարակչական միջոցներ, որոնցում օգտագործվում է հակահայկական շովինիզմի և ռասիզմի լեզուն: Թուրքական միլիոնավոր դոլարներ են ծախսվում այս հարցը փակի տակ պահելու համար: Որպես օրինակ հիշենք թեկուզ 1998թ. ֆրանսիական խորհրդարանի քննարկումները՝ ցեղասպանությունը ճանաչելու համար, երբ Թուրքիան ուղղակի ստիպված եղավ ուղղաթիռներ գնել Ֆրանսիայից՝ հարցի հետագա քննարկումները կանխելու համար: Դրան զուգահեռ՝ Թուրքիայում բացարձակ անտեղյակ են այս թեմայի վերաբերյալ միջազգային ճանաչում ունեցող գրականությանը:

Դրանք գերմանական, բրիտանական, ամերիկյան, ֆրանսիական և ավստրիական պետական արխիվների կարևոր նշանակություն ունեցող փաստաթղթերն են, որոնցից և ոչ մեկը թուրքերեն չի հրատարակվել:

Կասկածից վեր է՝ առկա է խնդիր, սակայն ի՞նչ տարբերակով է կարելի գտնել դրա լուծումը: Մի կողմից՝ գոյություն ունեն հայկական կազմակերպություններ, որոնք օգտագործում են իրենց հնարավորությունները՝ Արևմուտքի երկրներին մղելով ցեղասպանության ճանաչմանը: Մյուս կողմից՝ գոյություն ունի թուրքական կառավարություն, որը տքնաջան աշխատում է շրջանառության մեջ դնել «հայկական սուտը»:

«Այնուամենայնիվ, հարցի լուծման բոլոր ուղիները տանում են դեպի երկխոսություններ», - գրում է հեղինակը: Այդուհանդերձ, ըստ Աքչամի, խնդրի խաղաղ լուծումով չգոհացող ուժերը նոր խնդիրներ են առաջ քաշում. խոսքը տարածքային պահանջների մասին է: Խնդրո առարկա դեպքերը, ինչպես գտնում է Թաներ Աքչամը, տեղի են ունեցել անկախ Օսմանյան պետության տարածքում, և երբեք այն խնդիրը չի եղել, թե Թուրքիան գրավել է անկախ հայկական պետության տարածքը: Ուստի տարածքային խնդիրները, որ առկա են հայերի և թուրքերի միջև, օգտագործվում են ատելությունը, հակասությունները պահպանելու համար, նշում է Աքչամը և ավելացնում, որ, այդուհանդերձ, մեծ նվաճում կլիներ, եթե Օսմանյան Թուրքիայում ապրած հայ քաղաքացիների ժառանգներին թույլ տրվեր վերադառնալ այն տարածքները, որտեղ ծնվել են նրանց ծնողները:

Աշխատության երկրորդ գլխում (*«Թուրք-հայկական հարաբերությունները. խնդիրները, խոչընդոտները և դրանց կարգավորման հնարավորությունները: Թուրք-հայկական երկխոսությունների նախագծի առաջարկ»*) հեղինակը նախ որոշակիացնում է այն պարագաները, որոնց առկայությամբ պետք է զարգացվեն հարաբերությունները: Դրանք են.

1. Թուրքիայի և Հայաստանի, որպես անկախ պետությունների միջև հարաբերությունները.

2. Թուրքական պետության բարեկամությունն իր հայկական փոքրամասնության հետ.

3. Հայկական սփյուռքի բարեկամությունը Թուրքիայի և Հայաստանի հետ.

4. Դեռևս զարգացող թուրքական սփյուռքի բարեկամությունը Թուրքիայի և Հայաստանի հետ:

Նախագիծը պետք է կենտրոնանա այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք են երկխոսության խոչընդոտները, դրանց մասնազատումը և հանգուցալուծումները: Նման խնդիրների վրա իրենց ուշադրությունը պետք է սևեռեն և ուղղակի միջամտություն ցուցաբերեն հասարակական գիտությունները:

Կարևորվում է նաև խնդրո առարկայի շուրջ երկխոսության հանգամանքը: Դեպի 1915թ. գնացող խնդիրները լուծելու համար ոչ թե պետք է շարունակել պնդել նույն տեսակետը, այլ պետք է փորձել հասկանալ միմյանց, գտնում է հեղինակը: Անհրաժեշտ է խոսելու նոր լեզու գտնել, իսկ դրա համար, ըստ Աքչամի, պետք է հաղթահարվեն հետևյալ խոչընդոտները.

1. 85 տարի շարունակ այս խնդիրը ներկայացվել է լուրջ տարակարծություններով: Պատմական մեկնաբանների հակվածությունները պետք է մի կողմ դրվեն, և ձգտել հանրությանը ներկայացնել իսկությունը: Այս առումով ամենագավեշտական գործոնն այն է, որ բանավեճերը նյութը

քննում են անտեղյակորեն, իբրև՝ «բնական ռեֆլեքս».

2. Մյուս կարևոր պահը ազգային պատմությունն է: 100 տարի շարունակ հայերը և թուրքերն ապրել են կողք-կողքի: Սակայն չպետք է մոռանալ, որ այդ տարածքում նրանցից զատ 19-20-րդ դդ. ապրել են այլ ազգեր՝ տարբեր կրոններով և մշակույթներով, և նրանք ունեցել են ընդհանուր հիշողություն: Իհարկե, ակնհայտ է, որ օսմանյան հայերն իրեց զարգացման մակարդակով միանգամայն տարբերվում էին մուսուլման քաղաքացիներից: Եվ արդյոք դա՞ չէր առիթն այն դասակարգային պայքարի, որը տարածվեց քաղաքական, տնտեսական և հասարակական ոլորտների վրա: Անշուշտ, այդ բոլոր շտկումները պետք է արվեն այնպես, որպեսզի չվարկաբեկվի «մյուսի» կերպարը. հանգուցալուծման ուղիները պետք է փնտրվեն դասական հակասություններից այն կողմ:

3. Գլխավոր խնդիրն այն է, որ պատմությունը ներկայացվում է կա՛մ թուրքական, կա՛մ հայկական հակվածությամբ: Աքչամը գտնում է, որ չպետք է առանձնացվեն «մենք» և «դուք» կողմերը. ստեղծված իրավիճակի մասին հարկ է խոսել ամենատարբեր տեսանկյուններից:

4. Թ. Աքչամը նպատակահարմար չի գտնում հարցի միջազգայնացումը. «Փոխարենը միասին համագործակցելու, կողմերն իրենց կողմ են ներքաշում մեկ այլ՝ երրորդ պետության, որն էլ իր ճնշումն է գործադրում՝ դրական արդյունքի հասնելու համար: Դա կատարվում է սովորաբար ցեղասպանության ճանաչումով: Չնայած կարճատև հաջողություններին կամ պարտություններին, խնդիրն է՛լ ավելի է բարդանում, իսկ երրորդ կողմը իրավասու է դառնում իր անձնական շահերը և ուժը թելադրել երկու կողմերին էլ»:

5. Հայկական կողմի համար մերժելի է այն զանգվածային աղետի ժխտումը, որին նրանք զոհ են դարձել: Այս առումով Աքչամը կարևորում է այն հանգամանքը, որ Թուրքիան պետք է ականջալուր լինի, կիսի հայերի ողբերգությունը:

6. Հայտնի է, որ ժամանակակից Թուրքիայի բազմաթիվ խնդիրների լուծմանն արգելք է հանդիսանում իր իսկ անցյալը: Դա, մասամբ, պայմանավորված է հոգեբանական գործոնով, ինչն էլ դժվարացնում է ժողովրդավարության և մարդու իրավունքների խնդիրների լուծումը: Թ. Աքչամը կարծում է, որ քանի դեռ Թուրքիան երկխոսության մեջ չի մտնում հայերի հետ, չի կարող հասնել ժողովրդավարության հաստատմանը:

Վերոհիշյալ խոչընդոտները հաղթահարելու համար թուրք պատմաբանն առաջարկում է գործել հետևյալ նախագծով.

1. Նախ՝ անհրաժեշտ են թուրք-հայկական երկխոսությունների մանրակրկիտ քննարկումներ, որի համար պետք է հավաքվեն նախորդ ուսումնասիրությունները և համեմատվեն՝ ոչ միայն թեորետիկ, այլ նաև պրակտիկ առումով՝ ինչպես դա տեղի ունեցավ Գերմանիայի և Իսրայելի, Գերմանիայի և Չեխոսլովակիայի օրինակներում:

2. Ընդհանուր լեզվի և պատմական հեռանկարի կերտումը: Դրա համար անհարժեշտ է վերընթերցել նախորդ, նաև բազմաթիվ անհասանելի նյութերը:

Այս նոր մոտեցումը, ըստ Աքչամի, հնարավորություն կտա անկախ պատմաբաններին կազմել «պաշտոնական պատմություն»՝ պատմագրության հիման վրա:

3. Լուրջ աշխատանքներ պետք է տարվեն թարգմանությունների

ոլորտում: Անհրաժեշտ է ուշադրություն սևեռել հետևյալ չորս հանգամանքների վրա.

ա) Այնպիսի դաշտի ստեղծումը, որտեղ անկախ պատմաբանները կարողանան նոր ուղիներ գտնել և հիմնավորել իրենց տեսակետը.

բ) Մի այնպիսի ընդհանուր լեզվով թարգմանությունների կատարումը, որը մատչելի լինի երկու կողմերի համար.

գ) Նոր՝ ընդունելի նյութերի վերհանումը, որ արժեքավոր լինի երկու կողմերի համար.

դ) Նոր հավաքված տեղեկատվության համար մեկ ընդհանուր լեզվի կիրառումը:

Երրորդ՝ «*Ցեղասպանությունը օսմանաթուրքական փաստաթղթերի լույսի ներքո*» գլխում հեղինակն անդրադառնում է ցեղասպանության կազմակերպիչ ուժերին, դրանց գործունեությանը և հարցի պատասխանը փնտրում Իթթիհատ վե Թերաքքի, Թեշքիլաթի Մահսուսա (Հատուկ կազմակերպություն) և ներքին գործերի նախարարության հարաբերություններին համատեքստում: Դրա համար հեղինակն օգտագործել է 1919 և 1922թթ. ռազմական դատարանում վկաների և մեղադրյալների կողմից հնչեցրած վկայությունները, որոնք զուգակցվել են նաև այլ թուրքական փաստաթղթերով:

Ակչամի ուսումնասիրությունը սկսվում է 1914թ. օգոստոսի 2-ի Իթթիհատ վե Թերաքքիի կենտրոնական կոմիտեի գաղտնի ժողովի հիշատակումից, ժողով, որը որոշում կայացրեց. «Հիմնել հատուկ կազմակերպություն՝ բարելավելու բանակի տեղաշարժը թշնամու հողում»: Թեշքիլաթի Մահսուսան ստեղծվել է պաշտպանության նախարարության ներսում, ունեցել է պաշտոնական կարգավիճակ, իսկ անդամները եղել են պաշտպանության նախարարությունից, ներքին գործերի նախարարությունից և կուսակցության կենտրոնական կոմիտեից: Համաձայն Աթիֆ բեյի վկայությունների, այն ունեցել է առնվազն չորս տարբեր բաժիններ, և ցանցը տարածված է եղել ամենուրեք՝ նախարարություններում, բանակում, կենտրոնական կոմիտեում և ճյուղերում: Հանձնաժողովի հիմնական խնդիրն է եղել ռազմական խմբերի կազմակերպումը (çetes), որ գործելու էին բանակի ենթակայությամբ: Խմբերը գործողություններ էին վարելու, հիմնականում, Արևելյան Անատոլիայում՝ «ծառայելով միացյալ իսլամին և թուրքիզմի տարածմանը՝ թուրքական սահմանից դուրս»:

Երկրից դուրս՝ խմբերն ապստամբություններ էին կազմակերպելու Եգիպտոսում, Կովկասում, Իրանում, Ռուսաստանում և Հնդկաստանում: «Երկրի ներսում պետք է վերացվեն մարդիկ, որ վտանգ էին (Eşas) ներկայացնում: Սա է այն ուղին, որին պետք է հետևենք»: Այս հայտարարությունը արվել էր Էրզրումում կուսակցության քարտուղար Հիլմիի կողմից՝ ի պատասխան Բեհաէդդին Շաքիրի հեռագրի: "Eşas"-ը, երկրում, հայերն էին, և նրանց պետք էր վերացնել:

Թեշքիլաթի Մահսուսան սկսեց կազմավորվել օգոստոսի երկրորդ կեսին: Դրա համար օգտագործվեցին քրդական ջոկատները, դատապարտված կալանավորները, Կովկասի և Բալկանների վերաբնակները: Այս փաստերի հավաստիությունն ապացուցող բազմաթիվ հեռագրերից և նամակներից Աքչամը բերում է մի քանի օրինակ:

1. Քրդական ջոկատների առաջնորդին ուղղված Էրզրումի կուսակցական ներկայացուցիչ Հիլմիի նամակը. «Ես ձեզանից ուզում եմ 50 խի-

զախ տղամարդ և հոգ չէ, թե ինչ տարիքի են նրանք: Մարդիկ, որ պատրաստ լինեն իրենց կյանքը զոհել հանուն երկրի և ազգի»:

2. Կալանավորների ազատման և նրանցով Թեշքիլաթի Մահսուսայի շարքերը համալրելու մասին նշված է Իթթիհատ վե Թերաքքիի քարտուղարների զեկույցում. «Օգնություն է անհրաժեշտ Տրապիզոնի բանտի կալանավորներից, պետք է ազատել նրանց, սպաների հրամանատարությամբ կազմել հայտնի խմբեր»: Ստամբուլից պատասխան տրվեց, որ անհրաժեշտության դեպքում կալանավորները կազատվեն, բայց կալանավորների ազատումը սկսվեց նախքան թույլատվություն ստանալը: Այս մասին որոշումը կայացվեց սեպտեմբերին՝ Էրզրումում Թեշքիլաթի Մահսուսայի գլխավոր շտաբի կողմից: Սրան հետևեց արդարադատության նախարարի կողմից արված հատուկ համաներում. սեպտեմբերի 15-ին նախարարական հրաման ուղարկվեց շրջաններ:

3. Բալկանների և կովկասցի անատոլիական վերաբնակներից Թեշքիլաթի Մահսուսայի խմբեր կազմակերպելու մասին վկայում են Բալիքեշիրի կուսակցական քարտուղար Մուսա Բեյի և Բուրսայի Իթթիհատ վե Թերաքքիի գրասենյակի հոկտեմբերի 15-ի հեռագրերը, որոնցում, մասնավորապես, ասվում է. «... Շրջաններին ուղղված գաղտնի հրամանի համաձայն, պետք է օգտագործել հարմար պահը՝ վերաբնակներից խմբեր կազմակերպելու համար»:

Արդեն նոյեմբերի 13-ին Թեշքիլաթի Մահսուսայի կողմից տրված հեռագրի համաձայն «Իզմիրի, Բուրսայի, Բանդիրմայի, Բալիքեշիրի և այլ շրջանների կուսակցական քարտուղարները մեկ շաբաթվա ընթացքում պետք է գաղտնի ձևով խմբեր կազմեն և ուղարկեն Ստամբուլ»:

Օգոստոսին, խմբերի ստեղծումից հետո, գործողություններ սկսվեց Ռուսաստանի ներսում և հայկական գյուղերում: Թուրք մի քանի սպաներ իրենց հիշողություններում գրում են, որ իրենք վկա և մասնակից են եղել հայկական գյուղերի ավերումներին: Սակայն Կովկասում և Վանա լճի շրջանում թուրքական պարտություններին ավելացավ ևս մեկը՝ Սարիղամիշի մոտ, և այս անհաջողությունները ջնջեցին պանթուրքիզմի երազները: Միաժամանակ նախագծի իրագործման առնչությամբ լուրջ հակասություններ սկսվեցին Թեշքիլաթի Մահսուսայի և բանակի միջև:

Մարտի վերջին Բեհաէդդին Շաքիրը մեկնեց Ստամբուլ, որտեղ քննարկման առարկա պետք է դառնար ոչ միայն Թեշքիլաթի Մահսուսայի և բանակի միջև հարաբերությունները, այլև Թեշքիլաթի Մահսուսայի նոր պարտականությունների մասին խնդիրները. «Բեհաէդդին Շաքիրը խոսում էր Թուրքիայի հանդեպ հայերի վերաբերմունքի և ռուսական բանակին օժանդակելու մասին և հավաստիացնում, որ բոլորը պետք է վախենան ներքին թշնամուց այնպես, ինչպես արտաքին թշնամուց»: Հայերի գործողությունների մասին մի քանի փաստաթղթեր ունեցող դոկտորն իր ընկերներին Ստամբուլում համոզում էր, որ անհրաժեշտ է ոչնչացնել վտանգը:

Հավանական է, որ ցեղասպանության որոշումը կայացվել է հենց այս ժողովի ընթացքում՝ մարտի վերջին, Ստամբուլում: Քննարկումների ընթացքում որոշվել է, որ Բեհաէդդին Շաքիրը պետք է զբաղվի Թեշքիլաթի Մահսուսայի գործունեությամբ միայն երկրի ներքին թշնամիների դեմ պայքարի ժամանակ: Օսմանաթուրքական աղբյուրները վկայում են կայացված ևս երկու՝ ոչնչացման և տեղահանության որոշումների մասին: Այս մասին նշվել է Ստամբուլի և, հիմնականում, Յոզղաթի դատավարություն

ների ընթացքում, ուր 9-րդ նիստի ժամանակ (փետրվարի 22, 1919) ընթերցվեց 12 հեռագիր՝ տեղահանության և կոտորածների մասին:

Թաներ Աքչամը, ձեռքի տակ եղած փաստաթղթերով, վերակազմել է այն սխեման, որով իրագործվել է տեղահանությունը և ցեղասպանությունը: Ըստ այդմ՝ դրանց նախագիծը կազմվել է ներքին գործոց նախարարությունում և շրջաններ է ուղարկվել կուսակցական պատասխանատու քարտուղարների կողմից, իսկ իրագործվել է ժանդարմների և Թեշքիլաթի Մահսուսայի խմբերի կողմից:

Առկա թուրքական փաստաթղթերը վկայում են, որ տեղահանության գաղտնի հրամանները շրջաններ են ուղարկվել ապրիլի վերջին, ներքին գործերի նախարարության կողմից:

1915թ. մայիսի 9-ին ներքին գործերի նախարարության՝ արևելյան շրջանների կառավարիչներին ուղղված կողավորված հեռագրից տեղեկանում ենք, որ տեղահանությունը պետք է ընդգրկի Բիթլիսը, Հարավային Էրզրումը, Մուշի և Սասունի շրջանները: Ձեռքի տակ ունեցած փաստաթղթերով թուրք պատմաբանը վերհանում է այն փաստը, որ ծրագրի իրագործման համար եղել են երկու շարժիչ մեխանիզմներ.

1) Ներքին գործերի նախարարության պաշտոնական որոշումը տեղահանության մասին (ընդ որում՝ դա գործադրվել է ժանդարմերիայի կողմից).

2) Կենտրոնական կոմիտեի որոշումը՝ բնաջնջման մասին (որը գործադրվել է Թեշքիլաթի Մահսուսայի խմբերի կողմից):

Դատելով 1914թ. սեպտեմբերի 13-ին Թեշքիլաթի Մահսուսայից կենտրոնական կոմիտե ուղղված փաստաթղթերից, Աքչամը հավաստում է, որ կուսակցության քարտուղարները պատասխանատու են եղել շրջաններում խմբերի կազմավորման համար (Takvimi Vekâyi 3544, 5-րդ նիստ, մայիսի 14, 1335): Կուսակցական քարտուղարները նշանակվում էին իբրև Թեշքիլաթի Մահսուսայի խմբերի ղեկավարներ և օժտված էին լայն իրավունքներով: Նրանք կազմակերպում և ղեկավարում էին բնաջնջումը՝ տեղական մակարդակով: Բազմաթիվ փաստեր կային այն մասին, որ կուսակցական քարտուղարներն իրականում իրենց ձեռքն էին վերցնում շրջանի կառավարումը, և այն կառավարիչները, որ հրաժարվում էին կատարել նրանց հրահանգները, ուղղակի պաշտոնանկ էին արվում (Takvimi Vekâyi 3557, 6-րդ նիստ, մայիսի 14, 1335): Միաժամանակ, կարգադրվում էր ոչնչացնել բնաջնջման հրահանգներ պարունակող ցանկացած հեռագիր: Եղել են դեպքեր, երբ կուսակցական պաշտոնյաներին պաշտոնաթող անելու փոխարեն նրանց սպանել են՝ հրամանը չկատարելու համար (Յ. Լեփսիուս, D'er Togesgang, op. cit, էջ 76): Կուսակցական քարտուղարները պատասխանատվություն էին կրում խմբերի կազմակերպման, ցեղասպանության որոշումն ի կատար ածելու համար: Նրանք հակահայկական տրամադրություններ էին սերմանում մուսուլման ազգաբնակչության շրջանում: Գլխավոր դատավարության դատավճռում բերված են Թալեաթ փաշայի՝ շրջաններ առաքված մի քանի հեռագրեր, որոնք հրահանգում են ճանապարհներից հավաքել դիակները և լճերը, գետերը կամ ջրհորները լցնելու փոխարեն այրել: 1915թ. հուլիսի 12-ին Դիարբեքիրի կառավարչին ուղղված հեռագրում Թալեաթը հայտնում է, որ նա տեղյակ է հայերի և այլ քրիստոնյաների կոտորածների մասին այդ նահանգում, նրանց թիվը հասնում է 2000-ի: (Կառավարության պետական արխիվների գլխավոր տնօրինություն. Osmanli Belgelerinde Ermeniler, 1915-1920, op. cit, փաստաթուղթ

71, էջ 68-69):

Թաներ Աքչամի բնորոշմամբ՝ Ստամբուլի Իթթիհատ վե Թերաքքիի դատավարության փաստաթղթերը ցույց են տալիս ինչպիսի հաջորդականությամբ են կատարվել ոչնչացման աշխատանքները: «Եթե մենք ուզում ենք կանխել զանգվածային սպանության ոճիրը, ապա առանց երկմտելու 1915-17թթ. դեպքերը պետք է ձևակերպենք իբրև ցեղասպանություն», - եզրակացնում է Աքչամը:

Աշխատության չորրորդ գլխում (*«Հայոց ցեղասպանությունը և թուրքերի լռությունը»*) պատմաբանի քննարկման նյութն են դառնում թուրքական ազգային ինքնագիտակցությանը բնորոշ տարրերը, որոնց տեսանկյունից էլ փորձ է արվում բացահայտել ցեղասպանության հարցում թուրքական մեկդարյա լռության պատճառները: Թուրքերի համար 80 տարի շարունակ արգելված թեմա լինելով, Հայոց ցեղասպանությունն այժմ շարունակում է խոչընդոտներ հարուցել ոչ միայն հայ և թուրք ժողովուրդների բարեկամության ճանապարհին, այլ նաև լուրջ խնդիրներ՝ ակադեմիական աշխարհում: Այս պարագայում հեղինակը խիստ կարևորում է խնդրո առարկայի լրջությունը և կոչ անում «կոլեկտիվ պատասխանատվության», գիտակցել, որ յուրաքանչյուր թուրք անդամն է հանդիսանում այն կոլեկտիվի, որ ծնունդ տվեց «ոճրագործներին»: Ենթադրվում է, որ ներկա սերնդի համար ավելի հեշտ կլինի ճանաչել ցեղասպանության փաստը, քանզի նրանք ուղղակիորեն պատասխանատու չեն եղել տեղի ունեցած դեպքերի համար: Մինչդեռ, գիտական մակարդակով այսօր փորձ է արվում «հասկանալ» նրանց արարքի պատճառները: Հակառակ դրան՝ Աքչամը գտնում է, որ ոճրագործներին «հասկանալու» ցանկացած փորձ պոտենցիալ կերպով «արդարացնում» է ոճրագործներին:

Անդրադառնալով թուրքական ազգային ինքնագիտակցության խնդրին հեղինակը վերլուծում է մի քանի գործոններ:

1. Ի տարբերություն Եվրոպական պետությունների՝ Թուրքիայի ազգայնականությունը և թուրքական ազգային ինքնավարությունը ձևավորվել են պատմական ավելի ուշ շրջանում, գլխավորապես իսլամի ազդեցությամբ. թուրքական ազգայնականության վրա լուրջ ազդեցություն ունեցան սոցիալ-դարվինիզմը և ռասայական գաղափարները:

2. Թուրքական ազգայնամոլությունը ձևավորվեց իբրև արդյունք թուրքական ազգային թերարժեքության բարդույթի: Թուրքական քաղաքական վերնախավը գիտակցում էր, թե ժողովուրդն ինչ էր մտածում թուրքերի մասին, և «հասկացված չլինելու զգացողությունը» ու «մեկուսացված մնալու վախը» կարևոր և հաստատուն գործոն դարձան իրենց հետագա գործողությունների համար:

3. Թուրքական ազգային ինքնագիտակցությունը ձևավորվեց պետության քայքայման և տարալուծման վախի պայմաններում: Թուրքական ազգային ինքնագիտակցության պրիզմայով քրիստոնյա փոքրամասնությունը սկսեց դիտվել իբրև Օսմանյան կայսրությունը տարալուծող հիմնական գործոն, ուստի՝ այդ ժողովուրդները սկսեցին ներկայացվել իբրև թշնամիներ:

Քրիստոնյաների դեմ ատելություն սերմանելու մյուս կարևոր գործոնը դարձավ իսլամը: Իսլամի օրենքների համաձայն՝ ոչ մի մուսուլման չէր կարող քրիստոնյային իրեն հավասար դիտել: Սակայն Օսմանյան կայսրության կազմալուծման պայմաններում բարեռորոգումների փորձեր

արվեցին, որոնք աստիճան առ աստիճան ընդլայնում էին քրիստոնյաների իրավունքները: Թուրքերը կորցնում էին իրենց սոցիալական կարգավիճակի գերակայությունը և ատելությամբ լցվում քրիստոնյաների հանդեպ, քանզի լինելով փոքրամասնություն՝ նրանք տնտեսապես ավելի բարձր դիրքերի էին հասել: Այս իրողությունն, անշուշտ, որոշակի դեր խաղաց հակաքրիստոնեական տրամադրությունների ձևավորման գործընթացում:

4. Աղետի պատճառ հանդիսացող հոգեբանական գործոններից մեկը պայմանավորված էր քրիստոնյա փոքրամասնության «ապստամբություններով»: Կայսրության ծայրամասային շրջաններում տարածքային կորուստները թուրքերի մոտ այն կարծիքն էին ձևավորել, որ այդ ամենի պատճառը քրիստոնյաներն էին:

5. Թուրքական ազգային ինքնագիտակցությանը բնորոշ տարրերից էր և այն, որ թուրքերն իրենց համարում էին «պատմության իրական զոհեր», որոնց դեմ կիրառվում էր «պատմական անարդարություն»:

6. Գոյություն ունի մեկ այլ կարևոր գործոն, որը խանգարում է թուրքերին՝ ազատվելու անցյալի սխալներից. թուրքերը խորապես համոզված են, թե մյուս ազգերի նկատմամբ նրանք ունեն գերակայություն և իշխելու իրավունք: Մինչև օրս նրանք խոսում են համաշխարհային կայսրություն ստեղծելու և ազգերին իշխելու մասին:

Ինչ վերաբերում է թուրքական լռության պատճառներին՝ հեղինակը դրանք պայմանավորում է երեք գործոնով.

1. Պատմական ճանաչողության բացակայություն թուրքական համայնքում: Սա վերաբերում է ոչ միայն Առաջին աշխարհամարտի շրջանի պատմությանը, այլ նաև 18960-70 ական թթ. ողբերգական դեպքերին: «Նման պայմաններում դժվար է ձևավորել մի համայնք, որն անտեղյակ է մինչև 1928թ. տեղի ունացած պատմությանը», - գտնում է Աքչամը:

2. Անցյալը մոռանալու ցանկության գործոնը, այնինչ, ինչպես նշում է պատմաբանը. «մոռանալու ցանկությունը շարունակականության տարբերակ է»:

3. Թուրք ազգի անձնական իմիջը: Հայոց ցեղասպանությունն արգելված թեմա դարձնելու ամենակարևոր պատճառներից մեկը հանրապետության ստեղծման պարագան է: Որոշ դեպքերում ցեղասպանության փաստի անտեսումով էր պայմանավորված հանրապետության հիմնումը, և հիմնադիրները դա փայլուն կերպով հասկանում էին, սակայն հակված չէին այդ մասին խոսել բարձրաձայն: «Մենք այսօր հպարտանում ենք մեր հանրապետության ստեղծումով, ինչը մենք ձեռք բերեցինք մեծ ջանքերի գնով, - նշում է Աքչամը, - մենք հպարտանում ենք մեր «Ազգային ուժերով», որ ռեալ երաշխիք են հանդիսանում մեր անկախության պահպանման համար, և, փաստորեն, վախ կա, որ ցեղասպանության ճանաչումով մենք կկորցնենք հավատը՝ ինքներս մեր նկատմամբ»:

Ահա սրանք են ցեղասպանությունը մերժելու հիմնական պատճառները, նշում է Աքչամը և եզրակացնում. շատ հեշտ է միանգամայն մերժել ցեղասպանությունը, սակայն հարց է ծագում, արդյո՞ք այդ քաղաքականությունը դրական կգնահատվի այսօրվա և վաղվա հանրության կողմից այն դեպքում, երբ շարունակվում է գոյատևել հայերի դեմ կատարված ոճրի հարցը: